Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
մարտի 29-ի N 314 -Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 13-ի N 814 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չլինելու դեպքում արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար 2018 թվականի ընթացքում բնապահպանական հարկի պարտավորությունից ավելի վճարված գումարների (այսուհետ՝ պարտավորությունից ավելի վճարված գումարներ) վերադարձման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի կիրառման իմաստով՝ պարտավորությունից ավելի վճարված գումար է համարվում 2018 թվականի ընթացքում արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը գործող դրույքաչափերով հաշվարկված բնապահպանական հարկի և 2018 թվականի հուլիսի 1-ից հետո գործող դրույքաչափերով հաշվարկված բնապահպանական հարկի գումարի դրական տարբերությունը:

3. Պարտավորությունից ավելի վճարված գումարները վերադարձնում է հարկ վճարողից բնապահպանական հարկի գումարներ գանձած բանկը՝ հարկ վճարողի դիմումի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի գանձապետարանի (այսուհետ՝ գանձապետարան) կողմից տրված՝ սույն հավելվածին կից

N 1 ձևի տեղեկանքի հիման վրա: Հարկ վճարողը դիմումին կից բանկ է ներկայացնում տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը և վճարման անդորրագիրը: Հարկ վճարողի դիմումի և սույն կետում նշված տեղեկանքի միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում բանկը հարկ վճարողի դիմումը վերահասցեագրում է գանձապետարան՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով, միաժամանակ դիմումատուին տեղեկացնելով վերահասցեագրման մասին:

4. Բանկը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը կազմում է պարտավորություններից ավելի վճարված գումարները հարկ վճարողներին տվյալ ամսվա ընթացքում վերադարձնելու մասին ամփոփ տեղեկանք՝ սույն հավելվածին կից N 2 ձևին համապատասխան, և այն կազմելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գանձապետարան:

5. Գանձապետարանը պարտավորություններից ավելի վճարված գումարները բանկին փոխանցում է սույն կարգի 4-րդ կետում նշված ամփոփ տեղեկանքը գանձապետարանում ստացվելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ ամփոփ տեղեկանքում նշված բանկային հաշվի համարին փոխանցելու միջոցով:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 314 - Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում գանձապետարանը բանկերին է տրամադրում սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկանքը:

7. Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով պարտավորությունից ավելի վճարված բնապահպանական հարկի գումարները վերադարձնում է գանձապետարանը՝ բնապահպանական հարկը վճարողի կողմից գանձապետարան ներկայացված դիմումի հիման վրա: Դիմումի մեջ վճարողը նշում է իր բանկային հաշվեհամարը, որին ենթակա է փոխանցման վերադարձվող գումարը: Դիմումին կից ներկայացվում է տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ձև N 1

_____

_____

ՏԵՂԵԿԱՆՔ

NN ը/կ	Տեխզննման կտրոնի համարը	Տրանսպորտային միջոցի պետհամարանիշը	Տրանսպորտային միջոցի շարժիչի հզորությունը (ձիաուժ)	Տրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը	Բնապահպանական հարկի հաշվին մուտքագրման ամսաթիվը	Վճարված գումարը (դրամ)	Վերահաշվարկված գումարը (դրամ)	Վերադարձման ենթակա գումարը (դրամ)

Ձև N 2

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

20 ԹՎԱԿԱՆԻ _____ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստորև ներկայացվում է _____ բանկի կողմից վերոնշյալ ամսվա ընթացքում հարկ վճարողներին վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը.

NN ը/կ	Տեխզննման կտրոնի համարը	Տրանսպորտային միջոցի պետհա-մարանիշը	Տրանսպոր-տային միջոցի ձիաուժը	Տրանսպոր-տային միջոցի տարեթիվը	Բնապահպանական հարկի հաշվին մուտքագրման ամսաթիվը	Վերադարձված գումարը (դրամ)
						Ընդամենը՝ գումարը

Հարկ վճարողների 20 թվականի _____ ամսվա ընթացքում դիմումներով ներկայացված՝ բնապահպանական հարկի պարտավորությունից ավելի վճարված _____ դրամը
(նշել գումարի չափը)
_____ հաշվից
(գանձապետական հաշվեհամարը և հաշվեհամարի անվանումը, որից գումարը ենթակա է վերադարձման)

ենթակա է փոխանցման _____ բանկում գտնվող N _____ հաշվեհամարին:

Պաշտոնատար անձի _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Ամփոփ տեղեկանքը կազմելու ամսաթիվը _____ _____ 20 թ.